ԶՕՐ. ԱՆԴՐԱՆԻԿ ԿԸ ԽՕՍԻ

(5)

Ա. ՏԱՐԻ — ԹԻՒ 21 ԳԻՆ՝ 75 ՍԱՆԹԻՄ ՓԱՐԻԶ, ՇԱԲԱԹ 7 ՄԱՅԻՍ. 1921

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Եւրոպա 40 ֆր. տրկն. 25 վցմս.
Ամերիկա 5 տոլար » 3 »
Թուրքիա 400 Ղրշ. » 250 »
Եգիպտոս 100 » » 60 »

ԱՊԱԳԱՅ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ՌԱՄԿ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՐԵՒՄՏ. ԵՒՐՈՊԱՅԻ ՇՐՋԱՆԻ

Խմբագրութեան եւ վարչութեան վերաբերեալ նամակ, գրութիւն եւայլն ղրկել
Գ. ՑՈՎՀ. ՓՕՂՈՍԵԱՆԻ
50, Rue de Paradis — Paris (X°)

"ABAKA" (l'Avenir) journal arménien hebdomadaire

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

«Սիրելի Անդրանիկ, կ'ըսէր ինծի Գ. Խատիսեան իր այդ նամակին մէջ, իմ ցանկութիւնս է որ դուն հաշտուէիր կառավարութեան հետ եւ ես կը լինէի միջնորդը»։

Իմ հաշտուելս կամ ոչ, աւելցուցի իմ պատասխանագրիս մէջ, մեծ կարեւորութիւն մը չունի, մենք այսօր կանք, վաղը չկանք։ Երբ Հայաստանի սահմանները գծուին եւ պետութիւններէ ճանչցուին, երբ մենք կ'ունենանք քօալիսիոնի կառավարութիւն, այն ժամանակ հայ ժողովուրդը երջանիկ կ'ըլլայ եւ եթէ քօալիսիոնի կառավարութիւնը յարմար տեսնէ ինծի գործ մը յանձնել, ես սիրով կը կատարեմ անոր հրամանը։ Ի սէր Աստուծոյ այնպէս ըրէք, որ յետագայ սերունդը ձեզ օրհնէ եւ ոչ թէ անիծէ։»

Զանգեզուրի մէջ գլխաւոր մտահոգութիւնս էր 30 հազարի հասնող գաղթականութիւնը, որու ինչ աստիճան խնամք տանելս եւ փողոցներու մէջէն որբերը հաւաքելս տեսած է ամբողջ այդ շրջանի ժողովուրդը։

Թող հակառակորդներս իրենք հաշիւը տան Թրքահայաստանէն Կովկաս ապաստանած 380 հազար գաղթականութեան, որուն կէս կոտորել տուին Իգտիրի, Էջմիածնի, Երեւանի եւ Աղեքսանդրապոլի պատերուն տակ եւ այս գաւառներու 200 հազար տունի հասնող ազգաբնակութեան աչքին առջեւ։ Ռուս պետութենէն շնորհիւ Գ. Պապաջանեանի ջանքերուն մօտ 50 միլիոն րուպլի ստացան, այս դրամները բաժնուեցաւ զանազան բարեգործական հիմնարկութիւններու ձեռքով մեծ մասամբ տասնեակ հազար դասալիքներու, որոնք իբր պաշտօնեայ կը ծառայէին այդ հիմնարկութեանց մօտ։ Այս դրամինհաշիւները չտուին, ծախսեցին առանց քօնթռօլի։ Ոչ ոք գիտէ թէ ո՛րքանը տրուեցաւ գաղթականին։ Հակառակ ջանքերուս չկրցայ այս բարեգործական մարմիններու մէջ մտցնել Թրքահայաստանի վեց նահանգներէն վեց ներկայացուցիչ, որպէսզի մսխումի եւ գեղծումի առաջքը առնուէր։

Հակառակորդներս գիս կը մեղադրեն Էջմիածին ուխտի երթալով զէնքերս «Կաթողիկոս Զօրավարին յանձնած» և «Երևանի վրայ արշաւած» ըլլալուս համար։

Այո՛, ինձ համար Էջմիածին ուխտատեղի մըն է և Ս. Կաթողիկոսն ալ քսան զօրավարէն բարձր էր. այս պատճառով լարմար դատեցի անոր յանձնել զէնքերս։

Երբ Էջմիածին կը գտնուէի, ձիաւորներ մութ գիշերով մը լուր բերին ինձ թէ զինաթափ եղած մեր զինուորներէն եօթը հոգի սպաննուած են և թէ հրացանաձգութիւնը կը շարունակուի։

Նախապէս գրած էի Երևանի հրամանատար Շահխաթունիի, որ առանց իմ արտօնագրիս, զինուորներէս ոչ մէկուն թոյլ չտայ Երևան մտնելու և հակառակ պարագային, ձերբակալէ զանոնք։ Ասկէ ետք ըսկըսանք զինուորական ծառայութեան թուղթ տալ և ազատ արձակել զինուորները, որոնցմէ մօտ չորս հարիւր հոգի գացած էին Երևան։ Ամերիկացի միսիոնար Տօքթ. Ըշըր խոստացած էր օգնել, հագուստ և սնունդ տալով անոնց։

Մեր այդ զինուորներէն մէկը Զանգուի կամուրջէն անցած ատեն հայ մավզէրիստ ոստիկան մը զինուորական թուղթը կը հարցնէ, յետոյ կ՚ըսէ.

—Ատրճանակ ունի՞ս.

— Ոչ, կը պատասխանէ զինուորը։

— Վրադ պէտք է նայիմ։

Եւ ատրճանակ փնտռելու պատրուակով մավզէրիսթը կ՚առնէ զինուորին քսակը և կը սկսի փախչիլ։ Զինուորը կը վազէ անոր ետևէն։ Զինուորին ծանօթ եղող մը օգնութեան կը հասնի և կը բռնեն ոստիկանը։ Նոյն պահուն վրայ կը հասնի հայ սպայ մը։ Զինուորները լարգական բարև մը տալէ ետք կը պատմեն եղելութիւնը և դրամին տէրը կ՚ըսէ դրամապանակին պարունակութիւնը։ Հայ սպան փոխանակ քննելու և ճշդելու խնդիրը, կը փորձէ կերպով մը փախցնել գողը։ Զինուորները կը բողոքեն։ Ասոր վրայ սպան հայհոյելով ատրճանակ կը քաշէ անոնց դէմ։ Ուրիշ զինուորներ կը հասնին և կռիւ մըն է կը սկսի քարերով։

Զինուորական նախարարի օգնական Դրօ յիսունեակով մը կը հասնի միջադէպին վայրը և կը հրամայէ զարնել։ Յիսունեակը, որ վանեցիներէ կազմուած էր, կը պատասխանէ. «Մենք մեր եղբայրներուն վրայ կրակ չենք բներ» և կը քաշուի։ Դրօ կ՚երթայ և կը բերէ հարիւրեակ մը ուրիշ զինուորներ, որոնք կը սկսին համազարկի։ Մեր զինուորները կը յաջողին քարերով անոնցմէ ձեռք անցընել երեք հրացան։ Տօքթօր Ըշըր անձամբ ներկայ եղած է այս դէպքերուն։ Պէօյիւք-Վէտիի հերոսը կ՚ուզէր իր քաջութեան ապացոյցը տալ հայ զինուորներ կոտորել տալով։

Ահա այս լուրն էր, որ ինձ կը բերէին ձիաւորները։

Անմիջապէս տեղւոյն վրայ գտնուող ոստիկան թէ զինուոր թիւով

հինգ հարիւր հոգին գինաթափ կ՚ընեմ. թէլէֆոնի գործիքները կը վերցընեմ, սպաները կը տանիմ սենեակս և Էջմիածինի մէջ կարգը պահպանելու համար հարիւր ձիաւոր թողլով՝ կէս գիշերէն ետք կը մեկնիմ քովս գտնուող զօրամասով, որպէսզի երեան երթալով պահանջեմ գինուորներուս զիակները, վիրաւորները և բանտարկեալները։

Նոյն միջոցին Տիրայր եպսկ. և ուրիշ եպիսկոպոս մը ինձմէ խնդրեցին, որ նախապէս իրենք երթան և հասկնան խնդիրը։ Ըսի թէ Զանգուի կամուրջին գլուխը հասնելէս յետոյ ժամ մը միջոց կուտամ գինուորներուս զիակները, վիրաւորները և բանտարկեալները ինձ վերադարձընելու համար։ «Հակառակ պարագային, կ՚ըսեմ, պատասխանատու չեմ այն կռուին համար, որ պիտի մղուի քաղաքէն դուրս։»

Երբ կը մօտենամ Զանգուի ձորին, ինձ մօտ կուգան անգլիացի սպայ մը և սպայ Մարտիկ Պալեօղեան, որ անգլիացիներու մօտ կը ծառայէր։ Ասոնք ալ ինձ կը խոստանան անմիջապէս ինձ բերել ըսպաննուած, վիրաւոր և բանտարկեալ գինուորներս։ Կ՚ըսեն նաև թէ քիչ մը ետք կը հասնի նաև անգլիացի զօր. Տէվի։ Կը հասնիմ կամուրջին գլուխը և կը սպասեմ ժամ մը։

Շատ չանցած կը բերեն ծունկէն վիրաւորուած գինուոր մը, զոր փոխադրել կուտամ Էջմիածին։ Սպաներուածներուն դիակները կորսնցուցին, ըսելով թէ սպաննուած չկայ։

Եկան Զօր. Տէվի եւ Շահխաթունի ու խոստովանեցան թէ այս բանին մէջ յանցաւորը Դրօն է, խոստացան պատժել յանցաւորները։

Եկաւ նաեւ բանտարկուած գինուորներէն մէկը, որ միջամտած էր կռուին։ Այս գինուորը պատմեց թէ՝ ինչպէս իր դրաՃները, սուրը եւ ատրճանակը առած են նախապէս եւ բանտ մտնելէ ետք ալ ոտքէն հանած են կօշիկները եւ տարած։ Կը պահանջեմ այս գինուորին զոյքերը, որոնք ետ կը վերադարձուին։

Էջմիածին հասնելէս առաջ արդէն մաուզերիսթները սպաննած էին 150 հոգի։ Օր չէր անցած որ մարդ մը սպաննուի կամ խեղդուի։ Էջմիածին ինձ մօտ եկան գիւղացիներ և գանգատեցան թէ կառավարութիւնը զիրենք թալլած է, ձեռքերնէն առնելով բամպակը ոչինչ գինով (փութ մը բամպակը 50 բուպլիի, որ նոյն օրուան հաշուով կ՚ընէր 2 ֆր.։ Մէկ փութը 40 ֆունտ է եւ կ՚ընէ մօտաւորապէս 15 օխա)։

Գիւղացիներուն տուած տեղեկութեան նայելով այս գրաւուած բամպակները մօտ 500 հազար անգլ. ոսկի արժէքով էին։ Այս բամպակներն է, որ Գ. Ահարոնեան ուզեց ծախել Լիվրբուլի կամ Մանչէսթրի մէջ, բայց ելեւմտական նախարար Սարգիս Արարատեան անկէ աւելի ճարպիկ ելնելով ծախած է Պաթումի մէջ, ինք ստանալով քօմիսիօնը։	Ես պատասխանեցի բողոքող գիւղացիներուն թէ ո՛եւէ կապ չունիմ Երեւանի կառավարութեան հետ եւ կրնան երթալ ու աղերսագիր մը տալ Նիրքին գործերու նախարարին իրենց բամպակի խնդրին համար։ Գիւղացիները ըսին թէ արդէն զիմած են եւ արդիւնք մը չեն կրցած ստանալ։ (Վերջը լաջորդ թիւով) ԱՆԴՐԱՆԻԿ

Le 26.08.2017

WAN

©Western Armenia News